նւոյն՝ զոմն՝ ՚ի զինուորութիւն ընտրելով, ըզմիւսն՝ ՚ի դատաւորութիւն, զայլ ոմն գաւառապետ կարգելով, և զմիւսն գլուխ զօրաց կացուցանելով. զմին՝ ՚ի դուռն արքունի կարգեալ, զմիւսն՝ ՚ի վերայ խահիցն, և զայլ ոմն մատուակ և սպասաւոր իւրոյ Թագաւորութեանն ընտրեալ. այսպէս իմն և ամենաթագաւորն Մտուած ըստ իւրում նախատես գիտութեան ընտրեաց զամենեսեան ըստ իւրաքանչիւր պիտոյից յիւրաքանչիւր դարս և ժամանակս ըստ արժանաւորութե :

ՆՈՅՆՆ :

Յանկացայ զմարցն գորովասիրաց պահել սովորութիւն, առ որս տեսանեմք, զի կաթընկեր ունելով մանկունս, և անկիրթ ճաշակելիս կատարեալ կերակրոց՝ նախ ինքեանք առնուն զհացիկն, և յատամունս մանրեն, և ապա եդեալ ՚ի բերանս նոցա՝ առ ՚ի նոյն պիսի կերակրոցն ճաշակումն զտղայն դատարակեն : Սոյնպէս և Սարգապետաց՝ որոց պաշտօն քանին հաւատացաւ ՚ի հոգւոյն, հարկաւոր է առնուլ զկատարեալ հոգւոց կերակուր՝ գրաւորական վարդապետութի, և զնոյն յատամունս խաղաղութեան մանրել, և դիւրաճաշակելի և ախորժ առնել որոց կարևոր առ ՚ի նոյն սնունդ և աճումն :

ԴԻՈՆԵՍԻՈՍ :

Օ ի որպէս յարեգակն պշուլն պակասումն բնձեռէ աչաց հայեցողին, նոյնպէս և ակելի քան զչափն յառիլ ՚ի խորս գիտու-



Թեանն Մտուծոյ շացունն մտաց աչացն  
բերէ :

ՆԱՐԵԿԱՑԻ :

Ոսկին համր է, և առանց բերանոյ կա-  
րող է խօսել, և լռեցուցանել զբանաւորս  
յիրաւանց :

ՃԱՌԸՆՑԻՐ :

Մտորիկ են բնութեանս մերոյ սահման .  
յաղքատանալն տրտնջեմք և մեղադիր լի-  
նիմք Մտուծոյ, և 'ի հարստանալն ամբար  
տաւանիմք, և իբրև զանմահս զաշխարհէս  
բուռն հարկանեմք, վասն այսորիկ փոխ առ  
փոխ փոփոխմամբն ուսուցանէ զմեզ 'ի չա-  
փուռ ունել զանձինս, և քան զմեր սահմանն  
աւելի չամբառնալ՝ զի մի մեծագոյնս անկաւ  
նիցիմք քան զհող անարգ և խոնարհ :

ԼԱՍՏԻՎԻՐՏՑԻ :

'Եւախանձեանց ընդ մըջիւնն 'ի գործիական  
առաքինութիւնն, և զմեղուն ան տեսակաւ  
նին ապացոյց : Արպէս նա 'ի վերայ ամենայն  
ծաղկանց շրջի, նոյնպէս և դու զամենայն  
գիրս քննեա՛, և զպարկեշտն և զպիտանին 'ի  
նոցանէ ամբարեա՛ : Եւ յայնժամ զբանս հան  
ճարոյ քո առնուն մեծամեծք և փոքունք 'ի  
բժշկութիւն հոգւոց, և քաղցր լինի 'ի քիմս  
մտաց նոցա քան զմեղու խորիսիս : Եւ այ-  
սուռ լիցիս ցանկալի իմաստնոց, և փառաւո-  
րիս . որ 'ի տկար մարմնոյդ գերծուցեր զխո-  
հականիդ բանականութիւնն, և իմաստու-

Թէն սիրով խառնեցար յանմարմնոցն կարգ :  
Վանգի արդարև զմեղուի բերին զօրինակ  
Հելլենացւոցն իմաստունքն յաշխարհական  
հանձար, և եկեղեցւոյ Սարգապետք 'ի հո-  
գևորս գիտութիւն :

ԱՄԲՐՈՆԱՅԻ :

Որպէս նժար կշռոց ունի անձնիշխան  
կամք կախեալ ընդ ինքեան զհոգին և զմար-  
մին . ոչ պարտի տալ նոցա զմիմեանս հարու  
տասարեւ, այլ յօրինացն սահման պահե-  
լով զնոսա՝ ընդունելի է Մտուծոյ : Մպա  
Թէ հարստահարէ մարմինն զհոգին, լսէ 'ի  
Պաւղոսէ . Վիրգն կենդանւոցն մեռեալ է :  
Իսկ Թէ ոգին զմարմինն, դարձեալ ասէ .  
Ս'ի ջուր և եթ ըմպեր, այլ սակաւիկ մի և  
գինի խառնեցես վասն ստէպ հիւանդու-  
թեանդ :

ՆՈՅՆՆ :

Եւ վաճառք ըստ հրամանի Թագաւորաց  
կարգեացին 'ի քաղաքս, կամ յ'շխանաց ըստ  
հրամանի Թագաւորաց՝ Թէ 'ի քաղաքս, կամ  
յաւանս, կամ յայլ ինչ տեղի 'ի գաւառսն .  
և նախահոգութեամբ զչափս և զկշիռս, ըզ-  
գոյգսն նոքա դիցեն՝ տեսանելով զգօրու-  
թիւնս վաճառին : Կարգեցեն և կռփիչս՝  
միշտ որսնել և տեսանել, զի մի նենգութե-  
ինչ արասցեն : Եւ խարդախիցն խրատ ըստ  
հրամանի Իշխանացն լիցի . գողիցն 'ի չափսն  
և 'ի կշիռսն հատուցանել չորեքկին, և յան  
դիմանութեամբ նշանակել 'ի զարհուրումն

այլոցն : Իսկ դահեկանահատիցն և դրամահատիցն զձեռնն հատանել հրամանաւ Իշխանացն : Իսկ զմաքսն առնու իրաւապէս , յորժամ 'ի քաղաքս կամ 'ի դաւառս եկեալ վաճառիցեն . այլ մի լիցի յանցս ճանապարհաց մաքսել , եթէ ոչ վաճառիցեն . այլ վարձս միայն , եթէ 'ի Թշնամեաց' ընդ նոսա երթալով , պահեսցեն : Եւ մաքս հրամանաւ լիցի Թազաւորաց , և Իշխանք նմանապէս 'ի հրամանս նոցա մաքսիցեն : Եւ 'ի վաճառս խաբողացն զտգէտսն' ըստ գողիցն հատուցի : Իսկ զգին հացի և զգիննոյ և զայլոց այդպիսեաց , ըստ քաջաբերութեան ամի , կամ ըստ այլ իմիք պատճառի , նմանապէս ըստ նուազութեան : Եւ ըստ այդպիսեացդ պատճառի փոփոխել 'ի վեր և 'ի խոնարհ Թազաւորաց լիցի հրամանաւ , և Իշխանաց յիշատակելով Պաւառաւապետաց և յողովրդապետաց :

ՄԻՒԹԱՐ ԳՈՐ :

Եւ յսկ է մարդ բոլորովին . ոգի և զօրութիւնք իւր , միտք և շարժմունք իւր , մարմին և զգայութիւն իւր . զոր պարտ է ըստ վերագրելոցդ ամենայն զգուշութեամբ պահել . ոչ ընդ հրաժարեցուցեալն ընտանենալ , և ոչ 'ի համարձակելոցն օտարանալ . զի մի 'ի բարեզք և յընտանի կայից օր զոսկեալ 'ի վայր քարշեսցի մարդն Եստուծոյ , և բիժ ինչ արատոյ ընդ անարատ մաքրութիւնն խառնեսցի' եղծանելով զնախապին պատկերի լուսանկար գեղեցկութիւն :

ԳՐԻԳՈՐ ՄԵՆԱՒՈՐ :

Լսեմք զթիւան նմանս գոլ՝ որոց կողմունքն համեմատք են, որպէս զվեցն, և զքսան և զչորսն . քանզի կողմունքն վեցին երկուք և երեքն, իսկ քսան և չորիցն չորքն և վեցն : Աւ համեմատութիւն ունի ութն առ չորսն, և երեքն առ վեցն . քանզի կրկնապատիկ բանի տեսանի, զի չորքն երկուցն կրկնապատիկ է, և վեցն երիցն :

ՆԵՄԵՍԻՈՍ :

Հարիւր և տասն ամ էր ՚ի Սբբոյն Գրիգորէ, յորժամ գտաւ գիր ազգիս մերոյ . և զայնչափ ժամանակս ՚ի յայլալեզու դեգերանս էին տատանեալ . վասն որոյ առաւել փոյթ յանձին ունէին, զի երազ վարժեցին մանկունք յիւրաքանչիւր տեղիս : (Յորոց ընտրեցին թուով վաթսուն յաշակերտելոցն զառաւել ուշիմն և զփափկաձայնս և զերկարողիս, և առաքեցին յազգս և ՚ի լեզուս օտար գաւառաց՝ ուսանել իմաստութիւն և արուեստախօսութիւն, և առնել թարգմանութիւն . . . որք գնացին յ՝ զքսանդրիա, ՚ի ՚իւզանդիա, յ՝ թէնս, և յայլ գաւառս՝ ուսանել զիմաստասիրութի՛ն որպէս զայլ ազգս . զի նախանձ բազում էր յայնմ ժամանակի ուսման ամենայն ազգաց, և ծաղկեալ էր ուսումնասիրութիւն յաշխարհի . . . .

( ) Կնի բազումք յիւրաքանչիւր դարս և ՚ի ժամանակս հանդիսանային՝ նախանձաւոր բարեաց լինելով, ՚ի վաստակս և ՚ի ջանս պարաստելով զանձինս . ժրանային, տքնէին, աշխատէին, հարցասէր լինէին՝ ուսանելով, կրք

Թելով, վարժելով, պատրաստելով զանձինս  
 'ի յերկս օգտակարս, և 'ի գործս շահա-  
 ւետս: Սմանք զիմաստս հաւաքեալ՝ զուսում-  
 նականն, զքնաբանականն, զերկրաչափա-  
 կանն, զհամարողականն, զերաժշտականն,  
 զաստեղաբաշխականն, զքերականն և զքեր-  
 դողականն, զգործնական և զտեսական ի-  
 մաստասիրութիւն, և զմասունս նոցա՝ որք  
 են Թուով երկոտասան . . . . Սնելով ընդ-  
 ինքեանս բեռինս շահաւետս և արդիւնա-  
 րարս, մարդարիտս գեղեցիկս և ականս պա-  
 տուականս՝ զբաղխոհականն, զատենականն,  
 զկացրդականն և զաստուածաբանականն՝  
 զարդարեցին զերկս աշխատողացն . . . . Ծա-  
 նօթս առնելով բազմաց զգիտութիւն, զե-  
 րեակայութիւն, զմիտս և զկարծիս, և զըզ-  
 գայութիւն, զարհեստ և զմակացութիւն,  
 և զայլն ամենայն զգովելիմն և զպանծա-  
 լիմն:

#### ՃԱՌԸՆՏԻՐ:

Ս'ի ոմն զօրաւոր 'ի զօրացն Հոռոմոց պատ-  
 րաստեալ հուրնաւթիւ ծծմբով, և արկեալ  
 յաման ապակեղէն, և նստեալ 'ի վերայ ազ-  
 նիւ երիվարի քաջասիրտ և արի գոլով, վա-  
 հանաւ միայն զթիկունս ամրացուցեալ, և  
 ելեալ ընդ դուռն քաղաքին՝ մտանէ 'ի բա-  
 նակն Մյուսուսացն, ՄԱՆՏԱՏՈՐ ձայնելով  
 զինքն . և երթեալ մինչև 'ի բաբանն, շուրջ  
 անցեալ զնովաւ, և յանկարծակի 'ի վեր ա-  
 ուեալ զչիչն՝ եհեղ 'ի վերայ բաբանացն . և  
 նոյնժամայն բորբոքեալ հրոյն՝ բոց ծիրանի

'ի դուրս ելաներ, և ինքն դառնայր փութապէս :

ԱՍՏԻՎԻՐՏԻ :

'Ի սորա ( փոքուն թէոդոսի ) աւուրս էր սուրբ հայրապետն հայոց Սահակ . յորոյ աւուրս դարութիւնն հայոց լեզուիս՝ քսան և ինն գիր 'ի Ղանիէլէ փիլիսոփայէ Ղստրոնոց կարգեցաւ . իսկ զԵւթն գրոյն պակասութիւնն Ստրովպ երանելի հարոնեցի ինդրուածովք Ղստուծոյ առնու :

ԱՍՌԴԻԿ :

Կացոյց և լուսաւորս յերկինս՝ յառաջնորդութիւն և 'ի փոփոխումն աւուրց և ժաւանակաց , 'ի սնունդ մարդկան և ամենայն կենդանեաց , և բուսոց և տնկոց : Սակ ըզհուր և զջուր , զամպս և զհողմն յարդարեաց 'ի պէտս ազգի ազգի բուսոց և տնկոց՝ որ 'ի պէտս մարդկան արարան իւրաքանչիւր : Եւ որ 'ի ջուրմն են զուղակք և ձկունք , և ազգք դազանաց պէսպէս ընութեամբք և զանազան կերպարանօք 'ի ծովու և 'ի ցամաքի՝ մեծամեծք և փոքունք , քաղցունք և դառինք , շահեկանք և անշահք . նմանապէս և 'ի տունկս և 'ի բոյսս՝ որ 'ի պէտս արարան մարդկան , և ոչ Ղրարչին : Ղրար և ոսկի և արծաթ և պղինձ և երկաթ . և պատուական քարինք և անարգք՝ 'ի պէտս մարդկան՝ 'ի վկայութիւն մեծին Ղստուծոյ արարան : Եւ 'ի չորից նիւթոց զերեւելիս եցոյց . խոնաւ և ցամաք , ցուրտ և ջերմ՝ Ղստու :

ծոյ կազմեցան : Այլ 'ի նոյն նիւթոյ արա-  
րեալ զմարդն՝ և շնչեաց 'ի նա հոգի կենդա-  
նի և անմահ , մտաւոր և բանաւոր :

ՅԱՃԱԽԱԳԱՏԱԻՄ :

Օ ի՞նչ անդամ իցէ՛ որ ըստգիւտն հա-  
մարին 'ի սքանչելի արարածս մարմնոյս այսո-  
րիկ . զի՞նչ այն՝ որ պակաս ինչ է 'ի գեղեց-  
կութենէ . զի՞նչ այն իցէ՛ որ ոչն ճարտա-  
րութեամբ կարգեալ իցէ : Ասկ արդ՝ ոչ է  
պարտ նոցա հայել և տեսանել աչացս լուսա-  
ւորութեանս զհաստատութիւնս , կամ ո՞ր  
պէս ականջացն 'ի կողմանէ եղելոց անխա-  
փան զլեւիսն , կամ ո՞րպէս հատոտելիքն ըն-  
տրութիւն գիտեն առնել . և զի՞արդ զհա-  
գագն 'ի տալ և յառնուլ՝ շունչ մատակա-  
րարիլ մարթ է . և կամ զի՞արդ լեզուն կրբ  
կին կարգաց արբանեակ է ճաշակելեացն . և  
կամ ո՞ դք ինչ ըստամոքելոյ բանաւոր խօսիցն  
զօրութեան . կամ շնչափողն 'ի ծածուկ 'ի  
ներքս ամրացեալ՝ զի՞արդ անդադար ունի զօ-  
դոցն և շնչոցն տալ և առնուլ մատակարա-  
րութիւն . կամ զի՞արդ սիրտն 'ի ներքս անդ-  
միշտ անդադար զթնդիւնն պատրաստէ . կամ  
զի՞արդ յիւրաքանչիւր կարգս բաժանին ե-  
րակքն , և նէարդք բազմացեալ : Այլ կամ  
ով է՝ որ խոնաւ ջղօքն և նէարդիւքն զոս-  
կերս արար վայելչապէս . և կամ ո՞վ է որ  
զխորտիկս 'ի գեղեցիկ բաժինս բաժանեաց .  
զկէսն 'ի զօրութիւն հաստատութեան , և  
կէսն 'ի գեղեցիկ ընտրութիւնս խորհրդով

բաժանեալ : Եւ զամօթոյ մարմինսն 'ի պար-  
կեշտադոյն կողմնսն թագուցեալ պահէ :

ԿԻՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ :

Որպէս ծարաւ յաղբիւր դիմէ յօժարական ,  
Եւ ըզպապքեալ միտսդ արբուցեն բանիւք  
ուսման .

Որպէս լուսոյ ծագման յըստակ արեգական ,  
Եւ յն ըզհոգւոյդ աչքս բացցես տեսողական :  
Ս'ի յայլասեր ազգաց գարշիւր խընդրողդ  
ուսման ,

Ս'ի յազքատաց մեծամըտիր որպէս Ելիան .  
Եւ յա առ 'ի քեզ որպէս 'ի փռոյ վարդ հո-  
տեան ,

Թի զոք անօթ չնորհաց տեսցես և պատուա-  
կան :

ԵՐԶԵԿԱՑԻ :

Հեթանոսութեան սկիզբն 'ի Սերուբայ  
ժամանակաց անտի եղև . զի որ լաւ ոք ե-  
կեալ յաշխարհ մեռանէր , վասն յիշատակի  
քաջութեանն զպատկերն երանգօք 'ի նկա-  
րու հանէին . և անտի ուսեալ տիմարաց՝  
տակաւ 'ի պաշտօն առնուին : Եւ կոոց և  
դրօշելոց հանգամանք՝ առ Թարայիւ հարբ  
Երրահամու . և անտի իւրաքանչիւր ոք իւ-  
րով արուեստիւ զնոյն դրօշէր . դարբինն  
դարբնութեամբ , հիւանն հիւանութեամբ ,  
արծաթագործն և պղնձագործ և քարակոփ  
և բրուտ՝ իւրաքանչիւր արուեստիւ : Եւ ան-  
տի կարգեալ հասանէր յԱզիպտացիս և 'ի  
Բարեւոնացիս և 'ի Փուիւգացիս և 'ի Փիւ-



նիկեցիս գործ դրօշագործութեան, և խորհուրդք նորին : Եւ ապա 'ի Հելլենս՝ որ են Յոյնք, առ կեկրոսպեալ . և ևս յետոյ առ աւել աստիք առ Կոնստան և Րէալ և Գիալ և Լպողոնիւ, և առ այլովք բազմօք՝ զորս մի ըստ միօջէ Լստուածս անուանելին : Եւ Հելլենք կոչին Յոյնք յառնէ միօջէ՝ որքամ Հեղինոս անուն էր յԱլլադա ցւոց աշխարհին : Բայց այլք ասեն, եթէ 'ի ձիթենուոյն՝ որ յԼթենս բուսալ իւրովի . վասն զի ձիթենի Յունարէն ԵԼԻԱ կոչի : Բայց Յոյնք 'ի Յաւանայ, որ էր մի յառաջնորդաց աշտարակագործութեն . վասն որոյ ՄԵՐՈՎՊՍ ամենեքին կոչին յաղագս բարբառոյն բաժանելոյ . քանզի Բաժանումն Յունարէն ՄԵՐԻՍՄՈՍ կոչի : — Եւ առաջին կրօնք՝ խուժականք և սկիւթականք և հեթանոսականք կոչելին, մինչև եկն Լքրա համու աստուածպաշտութիւնն, և աղաւաղեաց զայն : Եւ Յուդայութիւնն 'ի Յուդայէ՝ որ է Հրէութիւն, 'ի չորրորդ որդւոյն Յակովբայ, յորմէ Թագաւորութիւնն էր . և կալաւ անունն զամենայն ազգն Յուդայական : Եւ 'ի վախճանի Հրէութե՝ Վրիստոնէութեան անուն 'ի Վրիստոսէ . որ նախ յԱնտիօք անուանեցաւ աշակերտելոցն :

ԵԶՆԻԿ :

Ատեաանէս և զմարմնոց իսկ աչս, յորժամ հանապազ ընդ ծուխ գայցեն, արտօսը բերեն . և յորժամ 'ի խաղաղ օդս և 'ի մարգս և յաղբիւրս և 'ի դրախտս զբոսնուցուն, ա

ուողջագոյնք և քաջատեւք : Վոյնպէս և մըտացն ակն՝ եթէ յեղտիւրս հոգևոր բանիցն ճարակիցի, սուրբ, յստակ և քաջատես լինի . իսկ եթէ ընդ ծուխ ինչ աշխարհի իւրացս գայցէ, բժարեր արտօսրալից լինիցի . և զազգի ազգի լալիւնս լայցէ՝ և աստ, և անդ :

ՈՍԿԵՐԵՐԱՆ :

Այլ ինչ ծանր հրամանքն : Այլէ ասա՛, զինչ աշխատութիւն յերդմանէն փախելն իցէ . միթէ ընչից ծախք իցեն, միթէ քրրտունք ինչ և տառապանք . շատ է կամելն միայն, և ամենայն վճարեցաւ : Իսկ եթէ զսովորութիւն պատճառս դնիցես, նա՛ վասն նորին այնորիկ ասեմ՝ դիւրին զուղղութիւնն . եթէ յայլ ընդելլութիւն կրթեսցես զանձն, զամենայն դիւրաւ վճարեսցես : Օ մտաւած, զի բազումք իսկ՝ ի հեթանոսացն իմաստնոց՝ որ առ քաղթնատութեան թոթովէին, ստեպ կրթութիւն զկաղ լեզու նոցա էած յուղղութիւն . և ոմանք՝ որոց թիկունքն ընդոստ ընդոստ դողացեալ շարժէին, սուրս կապեցին ՚ի վերայ թիկանցն, և մերժեցին զսովորութիւնն :

ՆՈՅՆ :

Խրատեցէք զորդիս ձեր ՚ի խրատ և ՚ի վարդապետութիւն Տեառն . քանզի խակ և ամեհի է մանկութիւն, և բազում վարդապետաց կարօտ, դաստիարակաց, սպասկաց, դայեկաց . քանզի պիտոյ է այնպիսի վար-

Ժիւք վարժել : Որպէս ձի ամեհի միշտ 'ի վարժոցս կայցէ , և գազան վայրենի 'ի հրաւհանգս' մինչև 'ի համբոյր գայցէ , այնպիսի է մանկութիւնն : Ընդատին իսկ յառաջին տիոցն պարտիմք սահմանս և կարգս բարիս հաստատել նմա . և ոչ ևս առյապա մեծամեծ աշխատութիւնս կարօտանայցեմք . այլ սովորութիւն իսկ օրէնք լինիցին : Ս'ի տացուք նոցա Թոյլ ըստ մտաց գիւրութեան գնալ , և մի իբրև մանկուոյ ներիցեմք նոցա , այլ 'ի ցածութեան պահեսցուք , զի այն քան զամենայն ինչ փնասակար է մանկութեանն : Եւ մեք նմին կարի պատկառ կայցեմք՝ վաղ և արագ կանայս ածիցեմք , զի սուրբ և անարատ պահեսցին 'ի պղծութենէ՝ 'ի հասակնել առ ամուսնութիւնն :

ՆՈՅՆՆ :

Որպէս 'ի մասունս մարմնոյ քան զամենայն պատուականագոյն և առաջին գլուխն է յաղազս տեղւոյն բարձրութեան , և ըզգայարանացն 'ի նմա եղելոց , և ապա այլքն յանդամոց մի ըստ միոջէ . այսպէս և յանդամս հոգւոյն՝ մեծ և առաջին իբրև զգլուխ , է հաւատոյն ճշմարտութիւն . և ընդ նմին յարմարեալք որպէս անձն ընդ գլխոյ , գործք արդարութեան մեծամեծք և փոքունք ըստ պատուիրանացն Վրիստոսի :

ՆԵՐՍԷՍ ԸՆՈՐՀԱԼԻ :

Հայեաց յերկինս 'ի վեր՝ ով մարդ , և յերկիր 'ի խոնարհ . և տես՝ եթէ զո՞ յարաւ

րածոցս յերևելեացս կամ յոչ երևելեացս  
այնպէս պատուեաց Մատուած, որպէս ըզ-  
քեզ: Եթէ զառաջին պատիւ արարչագոր-  
ծութեանն ասիցես, ահա՛ մեծ է և սքան-  
չելի. վասն զի այլ արարածք հրամանաւն  
Մատուծոյ ստեղծան, և դու ձեռամբն Մա-  
տուծոյ: Ե՛լ արարածք ՚ի պատկեր գծծու-  
թեան, և դու ՚ի պատկեր Մարչին: Ե՛լ  
արարածք ՚ի ընութեանն կապեալ կան, իսկ  
դու անձնիշխանութեամբ Մարչին քո նմա-  
նես: Ե՛լ արարածք անբանութեամբ ան-  
զարդք երևեցան և տրուպք, իսկ դու բանիւ  
և իմաստութեամբ զարդարեցար. և զպա-  
տիւն քո տիրապէս ո՛չ իմացար:

ՍԱՐԳԻՍ:

Օ երկիր ոմանք յարտաքնոց բարեաց փի-  
լիսոփայիցն ասացին, թէ ձեացեալ է իբրև  
սկուտեղ. և ոմանք ասացին իբրև զգունդ.  
և այլք որպէս քուեայ երկեռեակ դիմի, և  
՚ի միջոցի երկնի կառուցեալ. սաստկութեան  
հողմոյ ՚ի ներքոյ մտեալ՝ համբարձեալ ունի  
զերկիր ՚ի վեր. և ընդ անգայտութեան ցան-  
կցիր հողոյն երկրի խառնեալ մանրասիկ խռ-  
նաւութիւն ջուրց, և հողմոցն սաստկու-  
թեամբ ՚ի վեր փչելով, և երկրիս թանձրա-  
հող ծանրութեամբ ՚ի վայր կալով՝ կափճի  
հողն յերեարս, և ճնշի իբր ՚ի մամուլս, ման-  
րասիկ խոնաւութեան ջուրցն կալով ՚ի վեր  
կոյս. և խտանայ երկրային մարմինս ՚ի ներ-  
քոյ ջուրցն, և լինի սալայատակ, հաստա-  
տրամ, անփապելի և անպայթելի. նեցուկ

անվթար՝ զբաղմութիւն ջուրցն յինքեան ունելով, զոր և ծով անուանեմք : Եւ քանզի երկիրս չորեքկուսի՝ ի միջոցի երկնի կառուցաւ, ոչ թոյլ տայ սմա երկին իւրով երագութեամբն՝ ի ներքին կիսագունդն խոնարհել . քանզի երկիր իւրով ծանրութեամբն հակէ՝ ի վայր իջանել, և հողմն իւրով ուժգնութեամբն ջանայ՝ ի վեր բերել զնա . և ոչ ծանրութիւն երկրիս թուլացուցանէ՝ ի վեր բերիլ, և ոչ ուժգնութիւն հողմոյն տայ՝ ի վայր իջանել . և այնպէս զհաւասարակչութեան կալեալ՝ կայ . և յերկոցունց հակառակացն միջոցն զտրամագիծն ունի : Եւսկ կայեան սորա՝ ի տրամագիծ անդր զուղղանկիւնն չորեքին առ միմեանս հայեցուցանէ . և ի հայել ուղղանկիւնեացն առ տրամագիծն միջին՝ զամենայն հարթ, արդակ, զուգամանն՝ զեւնայինն և զդաշտայինն և զծովայինն յարմարեալ անշնաս պահէ, զի որ ի սմայքս են, անկասկած առցեն զլինելութիւն հրամանաւ Արարչին : — Եւ եթէ որ կամիցի օրինակ տեսական զարտաքնոցն լսել, իբր թէ զկայս երկրի նմանեցուցեալինձ՝ ի դէպ թուի ասացեալն ձու . որպէս նորա դեղինն՝ ի միջին գնդաձև կառուցեալ կայ, և սպիտակն շուրջ գնովաւ, և խեճեան պատ առեալ զամենայնիւ՝ նոյնպէս երկիրս ի միջոցի կառուցեալ կայ, և օդ շուրջ գնովաւ, և երկին պատեալ զամենայնիւ : Եւարձեալ՝ եթէ առցէ որ աման խեցեղէն, և արկցէ անդր ջուր, ձէթ և աւազ, ահա՛ յայտնի երևեցաւ՝ աւազն կալաւ զներքին

կողմն ամանոյն , և ձէթն զվերին , իսկ ջուրն  
հարկաւորեալ՝ ՚ի միջին կառուցաւ , և մար-  
մին ամանոյն պատ առեալ զամենայնիւ :

ԸՒՐԱԿԱՑԻ :

Օ որ օրինակ՝ թէ ախորժէ որ գծագրու  
թեամբ դեղոց պատկեր նկարագրել , զպէս-  
պէս երանգս դեղոցն ՚ի կիր ածէ , և ջանայ  
ուշիւ իմաստիցն զնա ՚ի տիպ և ՚ի հասակ և  
՚ի ձև կենդանեաց յօրինել՝ զի հաճելի և  
ցանկալի որպէս զկենդանի թուեսցի տեսու-  
ղացն անկենդանին . իսկ մարդ կենդանի՝ որ  
կրի հոգւով , մարմինն ո՛չ այսոցիկ ճշգրտու-  
թեան երանգաց կարօտի առ ՚ի հրատարա-  
կել զիւրն կենդանութիւն . այլ բաւական  
է միայն հոգին ներգործող զշարժումն ան-  
դամոցն՝ զայս հուշակել :

ԼԱՄԲԻՐՈՆԱՑԻ :

Քաղաք ընտրութեամբ իմաստասիրացն  
տուրևառիկ վաճառացն տեղի սահմանեցաւ ,  
որոշել ՚ի նմա տունս վաճառոյ , և ընդար-  
ձակ վայրս : Օ ի ամենայն գաւառականքն  
յամենայն կողմանց անգանօր ժողովելով իւ-  
րաբանչիւր որ զպէտս իւր գտանիցէ : Քայց  
են և ՚ի մէջ քաղաքացն ընտրութիւնք . զի  
են՝ որ շահաւէտք են և բազմավաճառք որ-  
պէս ծովեզերեայ քաղաքք՝ որ զնաւահան-  
գիստս պատրաստական ունին , և զնաւան  
բիւրաւոր բեռամբք ընդունին յամենայն կող-  
մանց :

ՍԱՐԳԻՍ :

Եւր երբեմն զհետ երամակաց ցուց յան  
 դրձնագոյնս արշաւեալ ընդ խորտաբորտնս  
 և ՚ի վիմուտ տեղիս, յորմէ կասել սկսաւ  
 Շ ապուհ : Իսկ Լ'տումայ Սոկացոյ եպե-  
 րեալ զնա՝ ասէ . Դնա՛ զնա՛ աստուածոր-  
 դիդ Պարսից, թէ այր իցես : Եւ նա . ասէ .  
 Դո՛ւ երթիջիր, զի ՚ի քարինս դիւաց է շա-  
 հատակել : Դարձեալ՝ յայլում ժամու դի-  
 պեցաւ ՚ի շամբս կինձս որսալ հրով . և Շ ա-  
 պուհ ո՛չ համարձակեալ ՚ի թաւուտն քաջ-  
 արշաւ լինել, մինչև շրջապատէր հուրն . և  
 նորա զհայեցուածնս յերկուս բաժանեալ  
 այսր անդր բերեալ լինէր երիվարանս : Սիւս  
 անգամ ասէ Լ'տում . Լ'ստուածորդիդ Պար-  
 սից՝ ահա՛ հայր քո և Լ'ստուած, ընդէր  
 զանգիտես : Իսկ Շ ապուհ ասէ . թողեալ  
 զկատակելո՛ւ՝ յանցանել ընդ հուրդ դարձո՛  
 զքեզ, որ և ես զկնի քո . քանզի յառաջելն  
 ձիս իմ խրտչի : Յայնժամ այպանեաց զնա  
 Լ'տում՝ ասելով . Սի՛թէ և այդ քարինք ի-  
 ցեն, զի ես յառաջեցից : Եւ արդ՝ եթէ դու  
 զՍոկացիս կոչես դիւազգիս, ես զՍաս-  
 նեանսդ կոչեմ կնամարդիս : Եւ մտրակեալ  
 զերիվարն՝ իբրև ընդ հովիտս ծաղկանց ան-  
 ցանէր զհուրն, զերծուցանելով զՇ ապուհ :

ԽՈՐԵՆԱՅԻ :

Լ'սի թէ Վիոզինէս յաւուրս ձմերայ-  
 նայ յերեկորեայ ՚ի կարաս իջանէր վասն ցրը  
 տոյն, և ՚ի տունջեան արտաքս ելանէր վասն  
 արևունս : Ս անն որոյ և երբեմն ջեռնելով սո-  
 րա, հասեալ Լ'քեքսանդրոս Սակեդոնացի՝

ստուեր առնէր 'ի վերայ նորա , զի մի ջեռ-  
ցի՝ ասելով ցնա . Լ'սա՝ Գիողինէ , զի՛նչ կա  
միս , զի շնորհեցից քեզ : Եւ նա ասէ . Օ այս  
ինչ շնորհեա՛ ինձ . փոքր ինչ 'ի բաց կացցես  
յինէն , զի ջեռայց : ՆՈՆՆՈՍ :

Կարկինոս՝ որ թարգմանի Խեցգետին ,  
ցանկայ ուտել զմիս զեռնոյ միոջ՝ որ անուա-  
նեալ կոչի Ստրէոս . և քանզի դժուարորս  
է Ստրէոսն , զի իբրև խեցեղէն պատեանս  
ունի շուրջ զիւրեալ , և իբրև ընդ ամրա-  
ծածուկ պարսպով զգուշացեալ պահի փա-  
փուկ մարմին իւրոյ կակուղ բնութեանն , և  
մորթն 'ի վերայ սեպ և ողորկ խեցանման է ,  
և այսպիսի իմն կոչեն զեռունն զայն Խեցե-  
մորթ . և քանզի կերպարանս պատենից Գաղ-  
տակրի ունի 'ի միջնողունն . զի այնպէս կազ-  
մեալ է զեռունն զայն Լ'րարիչն : Եւ ոտք  
Խեցգետնոյն ո՛չ կարեն գամս գտանել յո-  
ղորկ և 'ի սեպ պատեան զեռնոյն , ժամա-  
պահ դարանակալ լինի , միտ դնէ՝ եթէ երբ  
ելցէ Ստրէոսն 'ի խորոցն երթալ յեզրն ,  
որ անքոյթ իցէ 'ի հողմոյ : Եւ իբրև երթայ  
հասանէ յանքոյթ տեղին , սկսանի բանալ  
զպատեանսն՝ զոր ունի 'ի մկանունն 'ի նմա-  
նութիւն Գաղտակրի՝ ընդդէմ արևուն , զի  
ջեռցի : Եայնժամ երթայ վաղվաղակի Խեց-  
գետինն , ընկենու քար ընդ անջրպետնս պա-  
տենիցն , զի մի կարասցէ անդրէն զիւրեալ  
ամփոփել զպատեանսն . և լինիցի նմա դիւ-  
րաւ ըմբունել զՍտրէոսն , և ուտել :

ՄԵԾՆ ԲԱՐՍԵՂ :



Արարիչն Աստուած զեղական արարածոց  
կենդանեացս ազգ յերիս սեռս զանազա-  
նեալ որոշեաց . նախ՝ եղելոց հոգեղինացն  
զօրութեանց զվերին կայանն առ ինքեամբ  
և հուպ ընդ իւր տալով տեղի ընակութեան .  
իսկ զգալեաց և անասուն կենդանեաց որ  
յերկրէ, սահմանեաց ՚ի սոյնս՝ յորմէ ստեղ-  
ծան , բազմանալ , և ՚ի ծոց անդ մօրն դար  
ձեալ լուծանել : Այլ զբանաւոր զայս մարդ-  
յետոյ քան զբնաւան ՚ի ներքս մուծեալ՝ որ-  
պէս ուսաք ՚ի պատմութենէն , շողկապումն  
և խառնուած արար սովաւ իմանալեաց և  
զգալեացն էութեանց : Վնագի առ հող  
յերկրէ՝ ուստի անասնոց ջուք գոյացան , և  
փշեաց յերեսս նորա շունչ կենդանի՝ որով  
իմանալի պատկերն Աստուծոյ ՚ի նա էա-  
ցաւ . և եղև մարդն հողեղէն՝ որպէս զանա  
սունան , և պատկերակից Աստուծոյ՝ որպէս  
զՆրեշտակս , իմանալին այն հոգւով :

ԼԱՄԲՐՈՆԱՑԻ :

Օարմանալի և գեղեցիկ էր տեսիլ նու-  
րա . զի ունէր մարմին չափ հասակաւ , և մա-  
սունք անդամոցն պատշաճ : Ոչ կարի եր-  
կայն մարմնով՝ որ թուի անհեթեթ տեսա-  
նողացն , և ոչ փոքր՝ որ է արհամարհելի .  
այլ չափով ընտրութեան որոշեալ . և դի-  
մացն պատկեր կարի զուարթ , և հեշտալի  
տեսողացն :

ԻԳՆԱՏԻՈՍ :

Եւ իբրև այս այսպէս պատրաստեցաւ, երկոքեան կողմանքն լի սրամտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային, և գագաւ նացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին երկոքեան. և ամբօխ աղաղակին յերկոցունց կողմանց իբրև 'ի մէջ ամպոց շփութելոց ճայթմունս գործէր. և հնչումն ճայնից զքարանձաւս լերանցն շարժէր: 'Ի բազմութենէ սաղաւարտիցն, և 'ի փայլուն պատեւնագէն վառելոցն իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին: 'Ի, աւ 'ի բազում սուսերացն շողալ, և 'ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային: 'Ի, անզի ո՞ իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ճայնիցն, որպէս կոփիւնք վահանաւորացն, և ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առհասարակ խլացուցանէին: — Ընդ էր տեսանել շտապ մեծի տագնապին, և զաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն՝ առ'ի յանդուգն յարձակմանէն, զմիմեանս բաղխելով: 'Ի, անզի թանձրամիտքն յիմարէին, և վատասիրտքն լքանէին. քաջքն խիզախէին, և նահատակքն գոչէին: Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեանն՝ ըզգետն 'ի մէջ փակէին. և զանգիտեալ գունդերն Պարսից 'ի դժուարութենէ գետոյն՝ ըզտեղեաւն զեռալ սկսան: Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ճի 'ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ: Սաստկապէս բաղխեալք ընդ միմեանս՝ յերկո-

ցունց կողմանց բազում վերաւորք յերկիր անկեալ դիտութաւալ խաղային : — Յայնմ մեծի տազնապի՛ի վեր հայեցաւ քաջն Վ ար դան , և տեսանէր զընտիր՝ ընտիր քաջ նա- հատակաց Պարսից զօրուն՝ զի զձախակողմն շարժեցին զհայոց գնդին . մեծաւ ուժով յարձակէր ՚ի տեղին , և զաջ թեւն Պարսից գնդին բեկեալ՝ արկանէր զգազանօքն . և շրջան առեալ կոտորէր մինչև ՚ի նոյն տեղի : Եւ այնպէս շտապ տազնապի՛ի վերայ հա- սուցանէր , մինչև գունդն Սատեան քա- կեալ բաժանեցան ՚ի մեծամուր ւպատրաս- տութենէն . դեռ ևս քաջ քաջ ՚ի փախուստ դառնային : — Եւս գէտակն ՚ի վեր համ- բառնայր Սուշկան՝ Երեսալաւուրտն , քա- կեալ զոմանս տեսանէր ՚ի գնդէն հայոց , և զկնի մնացեալ ՚ի հովիտս լերանց : Վ ասն ուրոյ զաղաղակ բարձեալ՝ քաջալերէր շուրջ զիւրեաւ զգօրս Երեաց՝ որք զտեղի առեալ կային ընդդէմ գնդին Վ արդանայ : Եւ ան դէն ՚ի տեղւոջն երկուքին կողմանքն զպար- տութիւն խոստովանէին . և առ յոյժ թանձր անկեալ դիականց իբրև զքարակոյտս դերբ կաց երեւէին : — Օ այն իբրև ետես Սուշ- կան՝ Երեսալաւուրտն , մնայր գազանացն Եր տաշրի՛ որ ՚ի վերայ գազանացն նստէր ՚ի բարձր դիտանոցին , և կամ իբրև յամուր քաղաքին . և ՚ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդան ստիպէր , և յառաջամարտիկ զօրօքն գնա ՚ի մէջ փակէր : — Իսկ կորովին Վ արդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սա- կաւ նախձիրս ՚ի տեղւոջն գործեաց . յո-

րում տեղւոյ և ինքն արժանի եղև առնուլ  
զկատարեալ նահատակութիւնս :

ԵՂԻՇ :

Եւ խմբեցաւ պատերազմն 'ի դաշտին՝ որ  
կոչի Չիրաւ , և մատեան ճակատ առ ճա-  
կատ : Եւ մանկունքն քաջ Վախարարացն  
Հայոց ինքնակամ նահատակեալք մտին 'ի  
մէջ ճակատուցն առաջնորդութեամբ Սպա-  
րապետին իւրեանց Սմբատայ Լոպետի՝ որ-  
դւոյ Բագարատայ , որ յազգէն Բագրա-  
տունեաց : Ելին և 'ի զօրացն Պարսից հա-  
մատիք նոցա , և խաղացին 'ի մէջ ճակա-  
տուցն , և ցիր ընդ ցիր լինէր : Եւ 'ի դառ-  
նալ մանկանցն Պարսից , ընդ հուպ դար-  
ձեալ մերոցն զհետ նոցա՝ օրինակ իմն որպէս  
փոթորիկ յանտառէ տերեւութափ , այնպէս  
երագ յերիվարացն առեալ նիզակօք՝ դի-  
ցուրտ յերկիր ընկենուին . ոչ կարելով նոցա  
յիւրեանց ճակատն մտանել : Իսկ յորժամ  
Պարսիկքն զմերն շրջէին , նգբա 'ի վահանա-  
փակն Յունաց իբր յամուր քաղաք մտանէին  
առ ոչինչ վնասելոյ : Վանդի այնպէս արար  
Գորգոնոս իշխան հետեակ զօրուն , իբրև  
պարսպաւ պատեաց վահանօք զճակատն Պա-  
պայ : Վանդի զօրքն Յունաց վառեալ էին  
'ի գէնս ոսկոյ և արծաթոյ . և երիվարք նո-  
ցա նոյնպէս զարդու : Եւ էր տեսանել իբրև  
զպարիսպ ինչ . յորոց յոլովք 'ի ջղեայ և 'ի  
կաշեայ պահպանակաց զգետտուն զկարծբու-  
թեան վիմաց բերէին երևոյթս . և 'ի վերայ  
նոցա անխալամ գէպք նշանք արձակեալք

իբր զսաղարթ ինչ հովանաւոր ծառոց : Բայց  
 զվիշապացն մանուածս ահագին բերանաբա  
 ցուծեամբ ուռուցեալ 'ի փչմանէ օդոյն՝ ոչ  
 ինչ ուրեք կարեմ նմանեցուցանել, այլ մի-  
 այն իբրև զլեառն ինչ անդամանդեայ խո-  
 նարհիլ 'ի ծով զբովանդակ ճակատն Յու-  
 նաց 'ի Պարսկահան զօրսն : Բանդի և զնու  
 սա էր տեսանել իբրև զհզօր ինչ գետառ 'ի  
 կողմն 'ի լայն ծաւալեալ արդարև զջրոյ գոյն  
 զրահաւորացն բերէր տեսուծիւն : — Ըրդ՝  
 իբրև ետես մեծն 'Երսէս զայն ամենայն,  
 եւ նա 'ի կատար լերինն 'Կատայ, և ամ-  
 բարձ զձեռս իւր յերկինս՝ անխոնարհելի պա-  
 հելով 'ի խնդրուածս հանգոյն նախամար-  
 գարէին Սովսիսի, մինչև պարտեցաւ երկ-  
 բորզն Բմադէկ : — Իսկ 'ի ծագել արեգա-  
 կանն ընդդէմ մերոց զօրացն՝ 'ի պինձապատ  
 վահանացն նշոյլք զլեւամբքն փայլատակէին  
 իբրև յամպոյ մեծէ և 'ի նոցանէ 'ի դուրս  
 ոստէին 'ի մերոց 'Կախարարացն քաջ զրա-  
 հաւորք՝ որպէս փայլատականց ճառագայթք :  
 Յորոց միայն 'ի տեսուծենէն զանգիտեալ  
 Պարսկական գունդն, սակաւ ինչ և մերն  
 վասն ոչ կարել հայել ընդդէմ արեգականն  
 ծագման : Իսկ 'ի բախելն զմիմեանս՝ եղև 'ի  
 վերայ հովանի ամպոյ, և հոգմ սաստիկ 'ի  
 մերոցն կուսէ ընդդէմ Պարսկականին փը-  
 չեալ : Եւ 'ի խառնակել մարտին՝ պատահէ  
 Կամարահանն Սպանդարատ խմբի մեծի,  
 յորում էր քաջ Շէրգիր 'Վեկաց արքայ,  
 զգլուխ միջի գնդին պնդուծեամբ զտեղի  
 ճակատուն կալեալ : Եւ յարձակեալ Սպան

դարատ, և հերձեալ զխումբն՝ որպէս շան-  
թահար յերկիր կործանէր զքաջն. և ըզ-  
խումբն պտուտեալ՝ ՚ի փախուստ դարձուցա-  
նէր : Եւ այսպէս ՚ի վերին օգնականութե-  
նէն զօրացեալ հասարակ զօրքն ( Յունաց և  
Հայոց՝ դիակամբք թշնամեաց լին զգաշտն  
ամենայն, և զմնացորդն ամենայն ՚ի փա-  
խուստ շրջեալ հալածեցին :

ԽՈՐԵՆԱՅԻ :

Շնորհեաց նմա պատկեր լուսազարդ, և  
հասակ փառաց անհամեմատ ՚ի մէջ ամենայն  
մտեղեաց բանական ազգի. հարթ և ուղիղ  
հասակաւ, վայելուչ և պայծառ երեսօք .  
հեր գլխոյ նորա թխակերպ՝ գանգուրագեղ  
գիսաւորութեամբ աղբբեկ ջոկացեալ ՚ի վե-  
րայ սպիտակափառ ճակատուն յոյժ խուռ-  
նախիտ թանձրութեամբ . մրազարդ կամա-  
րաձև կցուածք յունիցն, և բիբք և արուսա  
նունք հանդերձ պտղովք վկայեալք, իբրև  
զուշան ՚ի հովիտս ծաղկեալ՝ ծաւաղին հրա-  
շազարդ յօրինմամբ . սուչք երկայնագոյնք  
և վայելչաւորք . լսելիք դիւրալուրք, և դիւ-  
րահաւանք ՚ի բարիս, և պայծառք լուսա-  
հրաշ նմանեալ գունով. շրթունք նորա իբ-  
րև զլար կարմիր . ատամունք նորա հուպ  
առ միմեանս՝ զտեալք յաղտոյ . տեղք մու-  
րուաց նորա զօրէն մանուշակի ծաղկեալք ՚ի  
վերայ գունագեղ այտից՝ ՚ի կերպս զուարթ-  
նոց տեսողացն զնա ցուցանէր :

ԱՐԾՐՈՒՆԻ :

Խայթեն բարկացողք իբրև զկարիճ, խածա  
տեն իբրև զօձս, հաչեն իբրև զշուն, պատա  
ռեն իբրև զգայլս, սրեն զատամուռնս իբրև  
զվարազս, փրփրին իբրև զգիւահարս : Ը  
րիւնուռչտ ակնն, մաղձատեսակ դէմքն՝ զըր  
կեալ՝ ի բնական գունոյն, անյօդ խօսքն՝ ա  
մենեւին պակասեալ՝ ի բանէ : Դողան բոլոր  
անդամքն, ոչ կարեն կալ յոտից վերայ, և  
զմի տեղի ունել, այլ զօրէն արբելոց այսր  
անդր դեղեւին : Բնդ վայր ածեն զձեռնս,  
և ՚ի հարուածս մերձաւորացն ձգեն : Կաւ  
քան զգիւահարս ևս յանդգնաբար բերին,  
և ատելիք տեսողացն երեւին, որքան մինն  
կամօք մոլեգնի, իսկ միւսն ՚ի դիւին լըբու  
թենէ :

ՍԱՐԳԻՍ :

Յորժամ տարեբոբս զըզըրդին,  
Հաստատութիւնքն սասանին .  
Իբր ըզձովու կոհակ կուտին  
Ի յեռանդանքն կաթսային .  
Ի այնատարած դողայ գետին,  
Ի թանձրութեանց հիմանց շարժին .  
Սի ըզմիոյ հետ խափանին,  
Կասեալ յերկուցն տատանին,  
Ի երինք հիմամբբող զարհուրին,  
Եւ ուժգնակի բախմամբ թնդին .  
Կարծրր բնութիւնք վիմաց հային,  
Եւ ամենայն նիւթք հրդեհին .  
Սինչ գետք հրեղէնք յորդահոսին,  
Իբր ըզհեղեղ ջուրց ծաւալին .  
Հողմով հանդերձ սաստիւ հրնչին,

Եւ միգախառնն մըումըուին .  
 Խըրթնահայեաց դիմօք վառին ,  
 Եւս Թափանցիկ վայրաբերին .  
 Իբր ըզտերև մի բորբոքին  
 ԲնուԹիւնք ամէն հողեղինին .  
 Բըլուրք լերամբքն հալեսցին ,  
 Եւ դաշտաձև աշխարհք լինին .  
 Ծոփու ալիքն ցամաքին ,  
 Եւ կենդանիք նորա նուազին :

ԸՆՈՐՏԱԼԻ :

Բայց Թէ ըզգիրս իմ յանկաւոր  
 Ռք պատմեսցէ պատշաճաւոր ,  
 Կարծեմ Թէ չի՛ նրմանաւոր  
 Եւս քաղաքաց որ երկրաւոր :  
 Լայն և արձակ նրստեալ յաԹու ,  
 Որպէս 'ի կաւըս Թագաւոր .  
 Կամ Թագուհի յոյժ գեղաւոր ,  
 Ոսկէտրտուն և ճամկաւոր ,  
 Փողփողելով 'ի վերջաւոր ,  
 Պայծառագգեստ և պրճնաւոր :  
 Շուրջանակի պարառաւոր  
 Պարիսպ ածեալ լայն և ամուր :  
 Ըշտարակօք բարձր ահաւոր ,  
 Իմաստապէս Լարուեստաւոր :  
 Որպէս ըզգլուխն գիսաւոր ,  
 Մակաւասար անձին բոլոր .  
 Հաստահեղոյս հիմամբ Լ'ի խոր ,  
 Մահարձանօք պըսակաւոր .  
 Տունք և տաճարք զարմանաւոր ,  
 Ըլնեալ 'ի գիրկս իմ շքեղաւոր :

ՆՈՅՆՆ :



Յընժա՛ խորանըդ լուսոյ ,  
 Բերկրեա՛ տաճարդ արևու .  
 Խընդա՛ աթոռդ Լստուծոյ ,  
 Բարձող Բանին Բարձրելոյ . . .  
 Բուրվառ խընկոց անուշից ,  
 Բառաբուրեանըն խառնից .  
 Օ որ ծերունեացըն խըմբից  
 Օ աղօթս խընկեն քոց բանից :

ԿՈՅԵՆ :

Եպիսկոպոսապետ Ս ըթանէս , և որք ընդ  
 նմա Եպիսկոպոսունք , և ամենայն Կախա-  
 ռարք Հայոց՝ Տեառն մերոյ Կոստանդեայ  
 Կայսեր ինքնակալի խնդալ :

Յո՛ւշ լիցի քեզ պայման ուխտի հօրն քո  
 Կոստանդիանոսի՝ որ առ մերում թագաւո  
 ըին Տրդատայ . և մի տացես զաշխարհն քո  
 Պարսից անաստուածից , այլ օգնեսցես մեզ  
 զօրօք՝ թագաւորեցուցանել զորդի Տրդա-  
 տայ զԵրուսրով : Բանդի Լստուած զձեզ ոչ  
 միայն Եւրոպիայ , այլև ամենայն Միջերկ-  
 րեայց տիրեցոյց . և ահ զօրութեան ձերոյ  
 եհաս մինչև ՚ի ծագս երկրի : Եւ մեք խընդ-  
 րեմք առաւել քան զառաւել տիրել ձեզ :  
 Ո՛ղջ լերուք :

ԽՈՐԵՆԱՅԻ :

Լուստոս ինքնակալ Կայսր Կոստանդոս  
 Սե՛ծի Ս ըթանիսի , և ամենայն համօրէն  
 աշխարհականաց քոց խնդալ :

Լուստոսի ձեզ զօր յօգնականութիւն , և  
 հրաման թագաւորեցուցանել ձեզ զԵրու-

րով որդի արքային ձերոյ Տրդատայ, որպէս  
զի բարեկարգութիւն հաստատեալ մեզ ծա-  
ռայեսցիք միամտութեամբ : Ո՛ղջ լերուք :  
ՆՈՅՆՆ :

Ստրատելաւան Վազաւոն, և ամենայն Վա-  
խարարք Հայոց մասինն Յունաց՝ Տեառն  
մերում Խոսրովայ արքայի կողմանն Մըա-  
րատոյ խնդալ :

Տէր գիտես զմտերմութիւն մեր առ յի-  
շել Թագաւորին մերում Մըշակայ՝ զոր մին  
չև ցօր վախճանին անշիջելի պահեցաք . և  
արդ խորհեալ եմք նոյնպէս ծառայել քեզ  
միամտութեամբ, եթէ հաստատեսցես առ  
մեզ դաշամբք զերիսս զայսոսիկ : Մըաջին՝  
չյիշել զյանցանս մեր, զոր պատերազմեցաք  
ընդ քեզ ՚ի հարկէ, և ո՛չ ՚ի կամաց : Արկ-  
րորդ՝ զի դարձուցես ՚ի մեզ զամենայն ժա-  
ռանգութիւնս մեր՝ որ ՚ի մասինդ Պարսից,  
զոր հատէք յարքունիս : Արրորդ՝ հնարել  
Թափել զմեզ ՚ի Այսերէ, զի մի վրդովես-  
ցեն զմնակութիւնս՝ որք ունիմք իշխանու-  
թիւն յայսմ բաժնի : Ալ զայս պայման ուխ-  
տի գրել, և խաչ հաստատել կնքեսցես . զորս  
տեսեալ փութասցուք ՚ի ծառայութի ձեր :  
Ո՛ղջ լեր Տէր մեր :

ՆՈՅՆՆ :

Վաջ արանց Խոսրով Հայոց արքայ Ստրա-  
տելատի Վազաւոնի, և ամենայն Վախա-  
րարաց մերոց ողջոյն :

Շատ ուրախ լերուք, զի և մեք ողջ եմք,  
և ուրախացաք ընդ լուր ողջունի ձերոյ, և  
առաքեցաք ըստ ինդրոյ ձերոյ զայս պայման  
ուխտի : Եւրաջին՝ չիշել զյանցանս ձեր,  
զոր չունէաք առ յանցանս իսկ, այլ երախ-  
տաւորս զմիամտելն առ Թագաւորին Եւրա-  
կունւոյ՝ զոր պաշտէիքն . զի և առ մեզ զնոյն  
յուսամք լինել : Երրորդ՝ դարձուցանել ՚ի  
ձեզ զժառանգութիւնս ձեր, զոր ունիմք  
յարքունիս՝ բաց յայնմանէ, զոր ումեք ու-  
մեք պարգևեցաք . և ոչ շրջին պարգևք Թա-  
գաւորաց առանց փաստու . մանաւանդ զի ՚ի  
դիւան հօրն մերոյ Տեառն Շապհոյ արքայից  
արքայի եմուտ . այլ փոխանակ ընդ այնր և  
յարքունուտ ընումք և զձերոյն պակասու-  
թիւնն : Երրորդ՝ Թափեմք զձեզ ՚ի գործա-  
կալացն (Յունաց՝ Թէպէտ պատերազմաւ ընդ  
Վայսեր, Թէպէտ խազաղութեամբ : — Եւ  
զքեզ՝ Վազաւոն, արիւն իմ և հարազա-  
տութիւն՝ ոչ ըստ վաղնջուց ազգականու-  
թեանն, այլ ըստ արդեանս՝ որ ՚ի մօրէ քում-  
մէ Եւրջանուշայ Եւրչակունւոյ, հանեալ ըզ-  
քեզ ՚ի հայրենեաց քոց Վամարահանաց, և  
՚ի մայրենիս քո յիմն առեալ ազգ՝ Եւրչա-  
կունի անուամբ պատուեցից :

ԵՈՅՆՆ :

Ի նուր զայս իմաստ աստուածային քո ըդ-  
 ձից պարտ համարեցայ՝ ո՛վ Պրիգորիոս, քա-  
 հանայապետական գլուխ և սին հաստա-  
 տութեան Լիկեղեցւոյ : Սակայն ունիմք առ-  
 այս և զհակառակադրացն զբանսն՝ որք ո՛չ  
 սակաւս տան ամբոխումն խորհրդոցն, որ ՚ի  
 մեզն շարժման : Վանզի է նոցա առ ամե-  
 նայն բան զներհակն մերձ դնել. եթէ եր-  
 կայնագունից հանդիպին բանից, գովեն փո-  
 քու հասանել և անցանել. իսկ եթէ սուղ-  
 իցէ բանն, իբրու ո՛չ պարունակող զիմաստս,  
 և ո՛չ բաւականապէս տալ զցոյցս՝ պարսա-  
 ւեալ լինի : Պարձեալ առ այս՝ եթէ նրբա-  
 գոյնս ինչ ունիցի, զպարզն առաջի դնեն՝ իբ-  
 րև դիւրահասս, վասն այնորիկ և օգտա-  
 կարս. ապա եթէ պարզագոյն իցէ, գովելի  
 է նոցա իմաստասիրացն եղանակ բանից՝ իբ-  
 րև զօրաւորս և արուեստականս : Երդ՝ այս-  
 չափ է նոցա դատելն, ո՛չ վասն առաջիկայ իւ-  
 րիս, այլ միայն՝ զի ընտրողս և ճանաչողս ցու-  
 ցեալ լինիցին : Իսկ մեզ զի լիցի զանձինս ան-  
 ըմբռնելի ունել՝ ՚ի նոցա կարծեացն, որչափ  
 ինչ ունիմք ուղղել՝ զմիջինն այսոցիկ տեսու-  
 թեանց ընտրեսցուք զբանն. ո՛չ յոյժ ամփո-  
 փել, և ո՛չ կարի երկայնել. դարձեալ՝ մի ՚ի  
 ծածկելն փութալ, սակայն ՚ի գեղջկացն  
 հեռագոյնս դնել նուաստ բանից : Եւ յա-  
 ղագս այսոցիկ այսչափ :

ԻԳՆԱՏԻՈՍ :

Վանզի բազում ինչ գործք յաւուրս Եւ-  
 տաշիսի գործեցան, վասն այնորիկ ՚ի բա-

զու՛մ ճառս կատօրեցաք՝ զի մի՛ երկայնու՛թք բանից տաղտկու՛թիւն ընթերցողացն լինիցի . որոյ է վերջին ճառս այսպիսի ինչ՝ յիշատակել և զայլն ևս որ ինչ՝ ՚ի ժամանակս Արտաշիսի : Օ՛ր թէպէտ և զայլն ամենայն՝ զոր ինչ յիշատակեցաք յառաջագոյն ճառիցն , կարգք և սովորու՛թիւնք գեղեցիկք հաստատեցան ՚ի Աղարշակայ , և յայլոց առաջնոց թագաւորացն , այլ ՚ի մեծամեծ արուեստից և ՚ի գիտութեանց ունայնացեալք էին , որպէս հինից և ասպատակաց պարապեալք . և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք , և կամ ոչ հասեալք , զԱբաթուց ասեմ՝ և զԱմսոց և զՏարեաց բոլորմանց : Վանգի ոչ այսպիսի ինչ ճանաչիւր առ նոսա՛ այլոց ազգաց վարելով . և ոչ ՚ի ծովակս աշխարհիս նաւագնացութիւնք , և ոչ ՚ի վերայ գետոց ճանապարհորդութիւք , և ոչ գործիք ձկանց որսոց . այլև ոչ յամենայն տեղիս երկրագործութիւնք , բայց դոյզն ուրեք , ըստ օրինակի հիւսիսականաց կողմանց շաղղակերութեամբ և այլովք այսպիսեօք կեցեալք : Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի :

ԽՈՐԵՆԱՑԻ :

Եւ մինչդեռ ՚ի խրճթէ անտի արտաքս հանեալ չուեալ ածեին ( զԱողոմոնն Ճգնաւոր ) յաթու Հայրապետութեան , հարցաւ յոմանց ազատաց՝ թէ վասն զի ծեր ես , և յանհնարին ճգնողական վարուց յոյժ անաւագեալ , ընդէր յօժարեալ երթաս ՚ի Հայ-

րապետութիւն : Եւ որ պատասխանեալ նա  
 րա առե՛ր . Եւրթամ, զի գեղապաճոյճ՝ նկա-  
 րողաց ուեւել զիս ընդ այլ Հայրապետն տամ  
 յորմ եկեղեցւոյն : Եւ ըստ սմին այսմ գործն  
 կատարէր . զի ո՛չ աւելի քան զմի ամ կեցեալ՝  
 փոխի յաշխարհէս , և դնի ընդ հարս իւր ,  
 և կենդանագորի 'ի քաւարանի սրբում :

ՅՈՒՆՅԱՆՆԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ :

Փիլիպպոս և Ուամբիաս Երիստոտելի վար-  
 դապետի խնդալ :

Օ Եւքսիս՝ որ 'ի վերայ կացուցաք ինա-  
 մածու պատանայդ , զմեր՝ զոր ինչ տամք բե-  
 րել առ ձեզ , ազդեաց ո՛չ բաւական լինել  
 Եղեքսանդրի՝ վասն բազում պարգևս կամե-  
 ցեալ տալ : Եւրդ՝ հասեալ յայդր վերայ ,  
 բարիոք կարգեա՛ , և նշանակեա՛ մեզ :

ՎԱՐԲ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ :

Սարդապետ Երիստոտելէս Փիլիպպոսի և  
 Ուամպիայ խնդալ :

Ո՛չ կարծեմ յիմոց ձեռաց խրատ առնել  
 որդւոյ ձերոյ Եղեքսանդրի՝ օտար ինքեան ,  
 և իմոյս , և ձերոց բարուցդ արտաքոյ իմն  
 գործեալ . քանզի լսեմ , և զուսմունսս օտրա  
 տեսանելով՝ դատող քննութեամբ առնել ,  
 և ո՛չ իբրև զմանուկ . այլ իբրև զհին այր ըն-  
 տրել և դատել կարէ : Եւրդ՝ զոր ինչ և ձեզ  
 հաճոյ թուեսցի , զայն գործեցէ՛ք : Ո՛ղջւե-  
 րուք :

ԱՆԴ :

Փիլիպպոս և Ուոմբիաս Օ իւքսեսի մերոյ  
խնդալ :

Եւաքեցաք Եւրիստոտելի վարդապետի  
զգրեալ թուղթն 'ի քէն առ մեզ , որպէս զի  
զայս ընկալեալ՝ զգրեալն 'ի նմա ջանացիր  
յուզղութիւն ածել : Ողջ լեր :

Եւրիստոտէլէս Եղեքսանդրի որդւոյ խնդալ :

Գրեցին առ իս ծնողքն քո , զի զառա-  
քեալ թոշակն 'ի նոցանէ քեզ ոչ լինել բա-  
ւական . զոր ոչ կարծեմ արտաքոյ՝ ոչ քոյոց ,  
և ոչ իմոց , և ոչ ծնողացն քոց կամաց այլ  
ազգ ինչ առնել : Ողջ լեր ինձ որդի քաղ-  
ցուենի :

Եղեքսանդրոս մեծահանձար վարդապետիդ  
իմոյ խնդալ :

Գիտեա՛հ հայր՝ անարժան գուզառաքեալ  
թոշակն իմ 'ի ծնողացն իմոց . և սակայն  
զայս լուեալ՝ պարտ և արժան էր բարկա-  
նալ , իբր յաղազս իւրեանց որդւոյ : Իայց  
արդ զընդդէմն գրեցին : Ողջ լինել քեզ ա-  
ղաչեմ :

Փիլիպպոս և Ուոմբիա Եղեքսանդրի որդւոյ  
խնդալ :

Օ կարգեալն քեզ թոշակ՝ զորս 'ի մէջ  
առաքեմք , արժանիս Փիլիպպոսի և Ուոմ-  
բիադայ վարկեալ՝ մի արտամերժեալ 'ի բաց  
առաքեր , և մի զԵւրիստոտելայ թուղթն .  
այլ որպէս քեզ վայել է , պահեա՛ . և զայնն

Լս ինչ լաւս ընդ միտ ածեալ՝ խորհեաց :  
 Ո՛ղջ լեր մեզ քաղցր և իմաստուն որդեակ :  
 ԱՆԴ :

**Մըքսանդրոս Փիլիպպոսի և Ուոմբիադայ  
 խնդալ :**

Օ կարգեալ թողակս՝ զոր տայք ինձ ՚ի  
 ձեռն Օ Լքսեայ, ո՛չ արժանիս Մըքսանդրի,  
 և որպէս վայելէ՝ զայս մատակարարել Փի-  
 լիպպոսի և Ուոմբիադայ : Եւ յԱ զԱ՛րիստո-  
 տելի զվարդապետին իմոյ զպատուիրանս ընդ  
 միտ ածեմ, և խորհիմ արժանիս ուսման  
 ընձեռողին, և զձեզ պախարակեմ, որ դիւ-  
 րաւ զլսելիսդ ՚ի վայր տայք այլոց երբեմն  
 վատաբարոյից և շոգմոգաց . և զայլս յա-  
 զագս որդւոց՝ որ ըստ բնութենէ պարտիք,  
 լուռ լինել՝ յաղագս նախախնամութիւն և  
 հոգ մատուցանել, որ ինձ օգուտ բերէ :  
 Ողջ լինել ձեզ ըղձիւք խնդրեմ :

ԱՆԴ :

Մըքրն ծով ՚ի ծով ծիծաղախիտ  
 յաւալանայր յառաւօտուն,  
 Երկու փայլակնաձև արեգական նման ...  
 Իերանն երկթերթի, վարդն ՚ի շրթանց  
 կաթեր,

Եզուին շարժողին քաղցրերգանայր տա-  
 լիղն :

Սոցրն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ,  
 Սղիքրն ծիրանի մանուշակի հոյլք :

ՆԱՐԵԿԱՑԻ :



Իսացցուք զթանգարական վաճառս հան-  
թից, վաճառեսցուք լսելեաց զգիւտս աշ-  
խատութեան մերոյ՝ առնուլ զունկնդրու-  
թիւն, և տալ զպատմութիւն, մանաւանդ  
վասն քոյոյ հրամանիդ՝ քաջ արանց Տրդատ,  
արքայ հայոց Սեծաց : Իւերեալ զշահ վա-  
ճառին աշխարհի շինութեան՝ քեզ ՚ի գանձ  
յաւելցուք ՚ի մերոց ծովավաստակ նաւաս-  
տեացս :

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ :

Իբրև չորսն տարան յերկիրն Պարսից զա-  
մենայն գերութիւնն հայոց, և զՕ ուխթ-  
երէց Լորտաշատ քաղաքի ունէին կապանօք  
առաջի թագաւորին Պարսից Շապհոյ : Եւ  
նայէր թագաւորն Շապուհ, և տեսանէր  
զերէցն. Օ ուխթ այր բարձր և անձնեայ, և  
ի տիոց մանուկ. և հերք գլխոյն ալւորեալ  
էին, այլ մորուքն դեռ տակաւին սեաւ ևս  
կային : Իսկա յորժամ զառաջինն խօսել  
սկսաւ, ասէ՝ թէ տեսանէք զառնդ զայդր  
զարութիւնն. քանզի այտի՝ի հերացն երևի,  
թէ կախարդ է. զի հերքն սպիտակ են, և  
մորուքն սեաւ : Իսկ երէցն տուեալ պատաս-  
խանի՝ ասէ, թէ քեզ պէտ իցէ, այլ զինչ  
կամիս խօսել և առնել, խօսեաց : Եւ վասն  
այդորիկ գիտեա՛, զի յիրաւունս սպիտակա-  
ցեալ են նախ հերքս, զի բազում աւուրքք  
երէց են՝ գոնեայ հնգետասան ամօք, քան  
զմորուսս նախարոյս են :

ԲՈՒԶԱՆԴ :

- Նորահրաշ պրսակաւոր և զօրագլուխ առա-  
քինեաց ,
- Ս առեցար զինու չողոյն արիաբար ընդ  
դէմ մահու .
- Ս արդան քաջ նահատակոր վանեցեր ըզ-  
թըշնամին ,
- Ս արդագոյն արեամբըդ քով պրսակեցեր  
զլիկեղեցի :
- Երկնաւոր Թագաւորին զինու յաղթեալ  
պատերազմին ,
- Խոհական իմաստու թեամբ խոհեմացեալ  
անճառապէս .
- Խորէն խորհրդական և ծանուցեալ ա-  
նուն բարի ,
- Խաչելոյն վրկայ եղեալ հեղմամբ արեան  
պրսակեցաւ :
- Իննական լուսով լըցեալ արիացեալն քաջն  
Մրտակ ,
- Թաթաւեալ 'ի կարմրութիւն բոսորային  
բրդեալ աղբիւրն .
- Օ փրկականն ըմպեալ զբաժակ և մը-  
կրրտեալ արեամբն իւրով ,
- Դասակցեալ ընդ անմարմնոցն Երրոր-  
դութեանն երգել ըզփառս :
- Սըրբափայլ զգեստուք պրճնեալ 'ի յերկ-  
նաւոր հանդիսադրին ,
- Երրորդութեամբն զօրացեալ , վանեալ  
զամուրրս Բանսարկուին .
- Չըմայեակ չօր ընծայեալ Որդոյ դու-  
լով չարչարակից ,
- Չողոյն յաղթեալ պատերազմին և չա-  
րասէր Թագաւորին :

- Լսական բարւոյն դիտմամբ ընդդէմ մեղա-  
 ցն վառեցաւ ,  
 Տարագնաց ելիւք յերկինքս պարակցեալ  
 ընդ անմարմնոցն .  
 Տաճատ զարմանալի տաճար եղեալ Ար-  
 րորդութեանն ,  
 Տէրունեան սուրբ խորհրդոյն տուն և  
 տեղի արժանացեալ :
- Ստացեալ ըզհաւատոյ վահան յուսոյն զբա-  
 Տիւք ծածկեալ ,  
 Օ փրկականն սաղաւարտ 'ի գլուխ ե-  
 դեալ զնրչան խաչին .  
 Սահան վեհերևեալ, նոր մանկութեամբ  
 նահատակեալ ,  
 Սաչելոյն վրկայ եղեալ պրսակեցաւ ա-  
 րեամբն իւրով :
- Դ՛հոտ անոյշ ողջակիզեալ մատուցանէր  
 զինքն նրէր ,  
 Բանաւոր պատարագաւ ընծայելով Հօր  
 'ի յերկինս .  
 Ըրսէնն ցանկալի արդարութեամբն ճո-  
 խացեալ ,  
 Իմաստութեամբ պայծառացեալ յեւթ-  
 նարիեան շնորհաց Հոգւոյն :
- Երկոքումբ Տարագատօք ընտրելագոյն նա-  
 հատակօք ,  
 Յառաջեալ յամենեցունց գլուխ և ա-  
 ւարտ Սարտիրոսաց .  
 Կախաշաւիղ գոլով բարեաց յառաջա-  
 դէմն Գարեգին ,  
 Ինկալեալ ըզբրաբիոնն յաղթանակ նա-  
 հատակաց :

Բամկական խումբ հազարաց և երեմնից թիւ  
ընդ վեցից ,

Որք ընդ նոսին նահատակեալք արիաբար  
պատերազմաւ .

Եւ հեղին զարիւնս իւրեանց 'ի նորոգումն  
Եկեղեցոյ ,

Բնդ նոսին պրսակելով 'ի յերկնաւոր հան  
դիսադրէն :


Պոհու թեամբ փառատրու թիւն Երրորդու  
թեանրդ նըւագեմք ,

Բազմութեամբ պրսակելոցս ըզմեօք մա-  
ծեալ առաքինեաց .

Եկեղեցիք հայաստանեայց պայծառա-  
պէս զարդարեցան ,

Ունելով միշտ բարեխօս ըզճրգնութիւն  
մարտի սոցա :

ԸԱՐԱԿԱՆ :



# INDEX

	<i>Page.</i>
<i>Grammar</i>	7.
<i>Alphabet</i>	8.
<i>Syllable</i>	10.
<i>Familiar Abbreviations</i>	11.
<i>Word</i>	12.
<i>Noun</i>	12.
<i>Declension</i>	18.
<i>Adjective</i>	29.
<i>Middle Nouns</i>	30.
<i>Pronoun</i>	36.
<i>Verb</i>	52.
<i>Participle</i>	57.
<i>Conjugation of the Substantive Verbs</i>	62.
<i>Conjugation of the Regular Verbs</i>	68.
<i>Conjugation of the Irregular Verbs</i>	84.
<i>Verbs Impersonal</i>	100.
<i>Preposition</i>	102.
<i>Adverb</i>	107.
<i>Conjunction</i>	117.
<i>Interjection</i>	119.
<i>Syntax</i>	120.
<i>Accents</i>	137.
<i>Punctuation</i>	158.
<i>The letters used as the Numbers</i>	139.
<i>Verse</i>	140.
<i>Exercises in the Armenian language</i>	143.
<i>Select Pieces from the Armenian Writings</i>	189.











